ողբալի հետեւանքն այն է, որ դպրոցական առաջադիմութիւն չի նկատւում մեզանում, չը նայած որ Հերբարտի և Ցիլլերի անուններումն ենք երդւում։ Հարկաւոր է ամեն տարւայ գործունէութեան հաշիւները հրատարակել. դոքա են, որ հիմք կը ծառայեն դպրոցների պատմութեան, որը շատ կարեւոր ծառայութիւն կ'անի մեր դպրոցներին։ Ինչ ասել կ'ուզէ, որ, ներկայ դէպքում, Ներսիսեան դպրոցի բազմամեայ պատմութիւնը հրատարակելու մասին մտածողը պէտք է լինի նոյն այդ դպրոցի վարչութիւնը և ոչ թէ մենք։

Խմբ.

---

# ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԷՍ

## ԾՐԱԳԻՐ

### Բաժին I. Երկրագործական արդիւնքներ։

Խումբ 1 Հացաբոյսեր. ցորեն, գարի, եգիպտացորեն, կորեկ, գօմի, բրինձ, պօլբա, խուփուկ և այլն, ոչ աւելի քան մի պուդ և նոցա հետ հասած հացաբոյսի խուրձեր։ Բրինձը, պօլբան, գօմին և կորեկը ներկայացնելու են թեփահան և անթեփահան։ Դարման և ծղօտ։

Ծանօթ. Հացաբոյսերի նմուշները ըստ կարելւոյն պէտք է լինեն այն ձեւի, ինչպէս նոքա վաճառւում են արդիւնաբերողների կողմից։ Բացի այդ՝ ցանկալի է ունենալ հացաբոյսերի զանազան տեսակների ժողովածուներ, միայն ըստ կարելւոյն զատ ուրիշ հատիկների խառնուրդներից։ Ջրարբի և անջրդի հողերի հացաբոյսերը պէտք է ներկայացնւեն առանձին առանձին։

Խումբ 2 Կերակրաբոյսեր։ Մշակւող կամ մշակւելու առաջարկելի կերակրաբոյսերի սերմեր և փոքր խուրձեր. առոյտ (եօնջա), կրունգան, ֆիկ, քրուշնա, գիւլուլ, ուղտխսկլի, շամբալա և այլն։ Սերմեր ներկայացնւում են ոչ պակաս քան քառորդ պուդ (10 ֆունտ) քանակութիւնով և նոցա հետ բոյսերի խորամիկներ՝ քաղւած՝ ծաղկած միջոցին։

Խումբ 3 Իւղաբոյսերի չորացրած նմուշներ. քնջիթ, դանադերչակ, կտաւատ, կանեփ, սորեակ և այլն։ Ձիթապտուղ։ Այդ բոյսերի և ձիթապտղի սերմերը—ոչ պակաս քան 10 ֆունտ՝ իրանց վաճառելի ձեւով։

Խումբ 4 Թելաբոյսեր։ Բամբակ. տեղային և օտարերկրեայ տեսակներ, մաքրած և անմաքուր. ցուցանել ընդ սմին թէ ինչ մեքենայով է մաքրած։ Բամբակաբոյսը արմատներով։ Ցուցանել սերմերի (հատիկները) ինչ տեսակի լինելը։ Բամբակից և սերմից ներկայացնել ոչ պակաս քան 10 ֆ.

իւրաքանչիւր տեսակից։ Բամի (մանելի եղինջ), կանեփ, կտաւատ և այլն, մի մի խուրձիկ մշակած և անմշակ։

Խումբ 5 Ծխախոտ։ Թերթածխախոտի նմուշներ վերին և ստորին տեսակի։

Ծանօթ. Թերթածխախոտը պէտք է հանդէս ուղարկել պապուշներով, հակերով, առհասարակ այն կերպ, ինչպէս նա փաթաթւում է պահպանելու և ուղարկելու համար։ Սերմերը 1/4 ֆունտ։

Խումբ 6 Ներկաբոյսեր. տորոն, սարաղան և այլն, մշակւող և վայրի։ Նոցանից ստացւող ամենայն տեսակ ներկեր։

Խումբ 7 Երկրագործական արդիւնքներին վերաբերեալ՝ շարադրութիւններ, հողի նմուշներ, զանազան իրերի քիմիական լուծումներ։ Ոռոգումի լաստակազմեր, ցանքացոյց քարտէզներ և այլն։ Երկրագործութեան վնասող միջատների ժողովածուներ։ Ապարդիւն (ժանգեալ) խոտեր, որոնք պատում են թէ հացաբոյսերի և թէ ուրիշ արդիւնաւոր բոյսերի ցանքսերը. (ապարդիւն խոտերը ծաղկած հասակում և նոցա սերմերը)։

## Բաժին II. Այգեգործութիւն և բանջարանոց։

### ա. ՄՐԳԱՅԻՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Խումբ 8 Զանազան տեսակի պտղատու ծառերի և թփերի նմուշներ։ Սերմից բուսած թփեր։ Ազնւացրած, կրթած ծառեր և թփեր կանոնաւոր բուսցրած։ Թզուկային և պտղատու ծառեր։ Այս խմբի առարկաները ներկայացնւում են 1—5 օրինակ իւրաքանչիւր տեսակից։

Խումբ 9 Զանազան թարմ պտուղներ՝ տեսակը և տեղական անունը նշանակած. ոչ պակաս քան 5 ֆունտ իւրաքանչիւր տեսակիցն։

Խումբ 10 Պահպանելու պատրաստած մրգեր. չորացրած (չիր) ոչ պակաս քան 1 ֆունտ իւրաքանչիւր տեսակից. կօնսերվի և քաղցրաւենու կերպ՝ ոչ պակաս քան 2 ֆ., պաստիլա. չուչխել և այլն, ոչ պակաս քան 2 ֆունտ։ Մաթ (դօշաբ, բաքմազ) և նոյնանման, ոչ պակաս քան 1 ֆ. իւրաքանչիւր տեսակից։

Խումբ 11 Պտղատու ծառերի և թփերի սերմեր՝ ոչ պակաս քան 1 ֆ. իւրաքանչիւր տեսակից։

### բ. ԶԱՐԴԱԾԱՌԵՐ

Խումբ 12 Ասեղատերև և լայնատերև զարդածառերի և թփերի նմուշներ (սերմնաբոյսերի)։

Խումբ 13 Բացօդեայ մշակութեան զարդածառերի և թփերի նմուշներ. միամեայ և բազմամեայ բացօդեայ ծաղկաբոյսերի նմուշներ։

Ծանօթ. Ցուցաբերները կարող են ցանկանալիս բերել ջերմանոցի բոյսեր, բայց իրանք պէտք է նոցա խնամեն։

Խումբ 14 Զարդածառերի սերմեր, ոչ պակաս քան 1 լոտ իւրաքանչիւր տեսակից։

## Դ. ԲԱՆՋԱՐԱՆՈՑ ԵՒ ԲՈՍՏԱՆ

Խումբ 15 Բանջարանոցի և բոստանի թարմ հնդեղէններ և ուրիշ արդիւնքներ։

Խումբ 16 Միենոյն արդիւնքները՝ յարմարեցրած պահպանելու. չորացրած հնդեղէններ, կանաչի և աղ ու թթու դրած ուտելեղէններ։

Խումբ 17 Բանջարանոցի և բոստանի բոյսերի սերմերը՝ ոչ պակաս քան $1/4$ ֆ. իւրաքանչիւր տեսակից։

Խումբ 18 Դեղատան բոյսեր—վայրի և մշակւող։

Խումբ 19 Պտղատու ծառերը խնամելու, պտուղների և հնդեղէնների քաղելու, պահելու, տեղափոխելու, մաքրելու և չորացնելու գործիքներ։ Այս առարկաների կաղապարակերպերը (մօդելները)։

Խումբ 20 Պտուղների և հնդեղէնների նկարները կամ լուսանկարները (բոյսի և տերևների հետ)։ Պտղատու ծառերի և պարտէզների նկարագրութիւններ և յատակագծեր։ Այգեգործական դպրոցի և պտղատու այգու շինութեան ծրագիրներ և նախահաշիւներ—գիտնական և արդիւնագործական նպատակների համար։ Բոլոր երկրի կամ մի առանձին տեղի այգեգործութեան և բանջարանոցախնամութեան նկարագրութիւն։ Այգեվնաս և բանջարանոցավնաս միջատների նկարագրութիւն, ցոյց տալով նոցա դէմ մաքառելու հնարները։ Շարագրութիւններ վերաբերեալ տեղական այգեգործութեան և բանջարանոցագործութեան։

Ծանօթ. 19 խմբում կարող են մասնակցել ռուս և այլազգի տներ։

## Բաժին III. Գինեգործութիւն։

Խումբ 21 Կովկասում և Անդրկովկասեան երկրում պատրաստած զանազան գինիների նմուշներ, իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան 2 շիշ։

Խումբ 22 Գինեգործութեան երկրորդական արդիւնքներ (խաղողի). օղի, քացախ, չորացրած գինեքար։

Խումբ 23 Գինին և գինեգործութեան երկրորդական արդիւնքները ճնշելու, եփ տալու, պահպանելու, փոխադրելու, քամելու, ծխահարելու, սոնձաթափելու և պահածանելու գործիքներ և անօթներ։ Ծծումբ տալու փուքսեր. մկլլելու և ուրիշ խաղողի հիւանդութիւններ բժշկելու

համար սրսկիչներ (պուլվերիզատոր). Փիլօկսերա ոչնչացնելու ժամանակ գործածւող ինժեկտոր։ Վազապահութեան և գինեգործութեան մէջ գործածւող ուրիշ ամեն տեսակ խոշոր և մանր գործիքներ. Նկուղների և ուրիշ գինեգործական շինուածքների կաղապարակերտներ (մօդել)։

Խումբ 24 Գինիները հետազօտելու գործիքներ։

» 25 Հիւանդութիւններից և միջատներից վնասուած խաղողի վազի, ճիւղերի և տերևների նմուշները։ Վազերին վնասող միջատների և ուրիշ օտարակերների ժողովածուներ նմուշներով (պրեպարատ) և նկարներով։ Հիւանդ գինիների նմուշները՝ որոշելով նոցա հիւանդութիւնը։

Ծանօթ. 23 և 24 խմբերի հանդէսաբերները կարող են լինել նոյնպէս ռուս և օտարերկրեայ անձեր։

## Բաժին IV. Շերամապահութիւն և մեղուապահութիւն։

### ա. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Խումբ 26 Շերամի որդը խնամելու գործիքներ և միջոցներ։

» 27 Զտած և չը զտած, չորացրած և մամուլած կոկոններ։

» 28 Թիթեռների հետ տալրակում և վերջնականապէս պատրաստած սերմեր։ Սերմ պատրաստելու համար գործածւող գործիքներ։

Խումբ 29 Կոկոնների չորացնելու, ջոկելու և ծրարելու համար գործածւող միջոցներ և գործիքներ։

Խումբ 30 Մարդաշարժ մանարաններում և գործարաններում շերամապահների իրանց մանած մետաքսաթելեր։ Մանելու գործիքներ։ Մանելուց մնացորդներ։

Խումբ 31 Մանր, կիսագործարանական և գործարանական եղանակով ոլորած մետաքսաթելեր. ոլորելու գործիքներ։

Խումբ 32 ոլորելու, կարելու և հանելու մետաքսաթելեր։ Մետաքսաթելի ոլորելու գործիքներ։

Խումբ 33 Մետաքսաթելի ներկելը, մանր արհեստաւորների և մեծ գործարանների ներկած մետաքսաթելեր։ Ներկելու համար գործածւող նիւթը և գործիքները։

Խումբ 34 Ժողովածուներ, աղիւսակներ, նկարներ, հեղինակութիւններ և շերամաբուծութեան դասատուութեան ձեռնարկներ և միջոցներ։

Խումբ 35 Մետաքսի ստայնանկութիւն։

### բ. ՄԵՂՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Խումբ 36 Փեթակներ և գործիքներ։

Խումբ 37 Մեղր, մոմ և մոմամշակութեան արդիւնքներ։

Խումբ 38 Մեղրատու բոյսերի ժողովածուներ։ Մեղուապահութեան աղիւսակներ, ժողովածուներ, նկարներ, շարադրութիւններ, նմուշներ և այլն։

## Բաժին V. Կաթնատնտեսութեան և տաւարապահութեան արդիւնքներ։

### ա. ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Խումբ 39 Կաթ, արաժան, թթու արաժան, տվօրօգ, մածուն, սեր եայլն։
» 40 Կումիս, քէֆիր և կաթնային օղի։
» 41 Եւրոպական և տեղական եղանակով պատրաստած իւղեր։
» 42 Եւրոպական եղանակով պատրաստած պանիրներ, ոչ պակաս քան 1 ֆունտ։

Խումբ 43 Տեղական ամեն տեսակի պանիրներ, նոյնպէս չուռ (չօր), չորաթան և այլն, իւրաքանչիւրից ոչ պակաս քան 3 ֆունտ։

Պանիրները կարող են բերել և այն անօթներում, որոնց մէջ նոքա պահւում են։

Խումբ 44 Խախոցներ և խախոցի մակարդներ (մայեա)։ Իւղի և պանրի համար գործածւող ներկեր և ուրիշ նիւթեր։

Խումբ 45 Առանձին տնտեսութիւնների նկարագրութիւններ, նկարներ, յատակագծեր, կաղապարակերտեր, պանրագործարաններ. դաստակերտների, գոմերի և դոցա նմանների նկարներ։ Արօտատեղիների բուսականութեան ժողովածուներ։

Խումբ 46 Կաթնատնտեսութեան գործիքներ և պատկանելիքներ, որոնք գործ են ածւում կաթը կթելիս, փոխադրելիս, փռելիս։ Խնոցիներ, պանրագործութեան գործիքներ։ Կաթնային արդիւնքներ, տեղափոխելու և պահպանելու անօթներ. թիթեղեայ ամաններ, տաշտեր, արկղներ, տկեր և այլն։

Խումբ 47 Կաթը հետազօտելու և ստուգելու գործիքներ։

Ծանօթ. 46 և 47 խմբերում կարող են մասնակցել նոյնպէս ռուս և օտարերկրեայ տներ։

### բ. ՏԱՒԱՐԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Խումբ 48 Բուրդ, մազ, կոշտամազ՝ այծի և ուղտի։
» 49 Ճարպ և դմակ։
» 50 Ծխահամ և վետչինի միս ընտանի կենդանիների ամեն տեսակից։ Մսի կոնսերվ՝ ապուխտ, ղաւուրմա, չաչխի և այլն։

Ծանօթ. 48, 49 և 50 խմբերի արդիւնքները բերւում են իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան 3 ֆունտ քանակութիւնով։

## Բաժին VI. Անտառապահութիւն։

Խումբ 51 Ծառերի և թփերի տեսակները կոճղներով և նմուշներով թէ վայրի և թէ արհեստական խնամած անտառներից։ Դոցա սերմերը։

Խումբ 52 Անտառի արդիւնամշակութեան առարկաների նմուշները, ուռոյցներ, գերաններ, սալատախտակներ, կողատախտակներ և ընդհանրապէս ամենահասարակ փայտեայ կերտուածքներ։ Տակառագործական կերտուածքներ։ Ածուխ։

Խումբ 53 Փայտի ցամաք ջեռուցման արդիւնքները. գզտորանման նիւթեր։ Կերակրի և դեղի համար գործածւող վայրի անտառի արդիւնքներ։

Խումբ 54 Անտառի մշակութեան համար գործածւող գործիքներ և մեքենաներ, սոցա և ուրիշ շինուածքների կաղապարակերտեր, յատակագծեր, նկարներ և լուսանկարներ։

Խումբ 55 Առանձին անտառային տնտեսութիւնների և անտառների նկարագրութիւններ, անտառային քարտէզներ, հեղեղներից, թափառող աւազներից, հողթափներից, ձիւնթափներից և այլն պատսպարելու նպատակով անտառ ցցելու նախագծեր, երկրի անտառապահութեան վերաբերեալ ուրիշ գիտնական աշխատանքներ։

Խումբ 56 Անտառներին վնասող միջատների և ծառերի ու թփերի հիւանդութիւններից վնասուած մասների ժողովածուներ։

## Բաժին VII. Ձկնապահութիւն։

Խումբ 57 Ձկնապահութեան և ձկնորսութեան վերաբերեալ գործիքներ և ուրիշ առարկաներ։

Խումբ 58 Ձկնապահութեան արդիւնքներ.—Թարմ և երկար պահպանելու միջոցներ. Թարմ ձուկն, ձկնկիթ (իկրա), ողնաջիլ (վեազիգա), չորացրած և ծխատապ ձուկն, դօշ, բալիկ, սոմինձ և այլն։ Ձկները բերւում են թիթեղապատեաններում, տակառիկներում—վաճառահանումի ձևով. ձկները ամբողջ—մարմնով։

Խումբ 59 Ձկնապահութեան և ձկնորսութեան վերաբերեալ շարագրութիւններ։

## Բաժին VIII. Երկրագործական գործիքներ և մեքենաներ։

Խումբ 60 Գութաններ իրենց բոլոր պատկանելիքներով, տեղական (Ջլղի գութան, օրխելի և այլն) և կատարելագործուած—առաջալենով և առանց առաջալենի, մի և բազմախոփանի և այլն։ Տեղական արօրներ (աչեչա, ձիբիրի, օկօկա, ջութ, կեռ, կավի, չորոց վեցկի և այլն) և կատարելագործուած արօրներ։

Խումբ 61 Սերմը հողով անելու և հողի մակերևոյթը փխրեցնելու գործիքներ. արօր, տափան (ցաքան, պարցխի, տափ, մալա, պօրչխի և այլն)։ Ցաքաններ (բօրօնա) երկաթեայ և փայտեայ. բազմաշար տեղական ձևի (մանգեռ, դրմաղ և այլն)։

Խումբ 62 Բոյսերի՝ աճելու միջոցին՝ խնամելու համար գործածուող գործիքներ—միջահերկ արօր, էկստիրպատօր, հող թաւալող արօր և այլն, նոյն նպատակին ծառայող մարդաշարժ գործիքներ (մոտիկա, տօխի և այլն)։ Ոռոգելու ակօսագիծ բացելու գործիքներ. մարկոս և այլն։

Խումբ 63 Հնձելու, խոտահարելու գործիքներ և մեքենաներ. մանգաղ, գերանդի, փոցխ, եղան, հնձող-մեքենայ, ձիաշարժ, տրմուղ խոտ շրջող, խոտի, բրդի բամբակի, իւղի, և այլն մամուլներ։

Խումբ 64 Կասելու և մաքրելու գործիքներ, կամ՝ ջառջառ, թակեր, եգիպտացորենի կամեր և այլն. Թեփահան, ջոկջոկող մաղեր, եղան, թիակներ և այլն։ Կասելու մեքենաներ, հովքամ մեքենաներ (վէալկա), բամբակ մաքրելու տեղական (չխրխի, ջակրիխ) և կատարելագործուած զանազան կերտուածք։

Խումբ 65 Մաշկահան և հատ մանրացնող մեքենաներ. դընդի (բըրինձի համար), ջաղացաքարեր և առհասարակ ջաղացների պատկանելիքներ։

Խումբ 66 Հատիկների և դարման չորացնելու և պահպանելու մեքենաներ, հորեր, արկղներ, պահարաններ, տոպրակներ, ամբարներ, եգիպտացորնոց, դարմանանոց և այլն—կաղապարակերտների ձևով կամ իսկական մեծութիւնով։

Խումբ 67 Ջուր բարձրացնելու համար գործիքներ, անիւներ, թիւրբիններ, քեահրիզներ և այլ տեղական կերտուածքի և կատարելագործուած կաղապարակերտ՝ բնական մեծութիւնով։

Խումբ 68 Շարժող մեքենաներ. քամիշարժ, ջրաշարժ և շոգեշարժ։

Խումբ 69 Գիւղատնտեսական սայլեր, արաբաներ և այլն։ Ապրանքների բեռով փոխադրելու յարմարեցրած գործիքներ։ Տաւարի կերակուրը պատրաստելու գործիքներ, յարդահատեր և այլն։

Ծանօթ. Այս բաժնի հանդիսաբերները կարող են լինել նոյնպէս ռուս և օտարերկրեայ անձեր։

## Բաժին IX. Գեղջկարհեստ, արհեստ և գործարանական արդիւնագործութիւն։

### ա. ԳԵՂՋԿԱՐՀԵՍՏԻ ԵՒ ԱՐՀԵՍՏԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

### Մետալի և կաւի մշակումը

Խումբ 70 Փականագործական կերտուածքներ. փակոցներ, կացիններ, մուրճեր, դանակներ, ասպանդակներ և այլն։

Խումբ 71 Դարբնային կերտուածքներ. պայտեր, բոքոններ, շղթաներ, խոփեր և այլն։

Խումբ 72 Թիթեղեայ և ցինկի կերտուածքներ։

Խումբ 73 Պղնձեայ կերտուածքներ, զանազան անօթներ և այլն։
» 74 Պաղ զէնք։
» 75 Հրաձիգ զէնքեր։
» 76 Ոսկեայ, արծաթեայ և ոսկերչական կերտուածքներ։
» 77 Բրուտի կերտուածքներ, կաւագործներ. ամեն տեսակ անօթներ և այլն։

Բուսաթելից, բրդից, սռեից և մետաքսից գործուածքներ։

Խումբ 78 Բրդեայ և կիսաբրդեայ գործուածներ։
ա. Մահուդ, շալ, դրիֆտրիկ, թաշկինակներ և այլն։
բ. Գորգեր, կարպետներ, քեօչաներ և այլն։
գ. Եափնջի, թաղիք, գդակներ և այլն։

Խումբ 79 Բամբակից կանեփից, կտաւատից և այլ նիւթերից պատրաստած մանածներ, ճօթեր և այլ գործուածներ. կտաւներ, չուաններ, թելեր և այլն։

Խումբ 80 Մետաքսի գործուածներ, թաշկինակներ և այլն։

Խումբ 81 Ճօթերի ներկելը և նկարագրոշմելը։

Արհեստի խառն արդիւնքները։

Խումբ 82 Կաշիներ. կօշկակարական արհեստ, թամբարհեստ, ոլկերի, ակճօրների և ուրիշ կաշեայ կերտուածների պատրաստութիւն։

Խումբ 83 Մորթու պատրաստութիւնը. գդակակարութեան արհեստ։
» 84 Դերձակութեան արհեստ. պատրաստի շոր, ճերմակեղէն և այլն։

Խումբ 85 Հանելը, գործելը, արհեստական ծաղիկների պատրաստութիւնը և ուրիշ ձեռագործներ։

Խումբ 86 Փապաւէնի և երիզի պատրաստութիւնը։
» 87 Կազմարարական և սուարաթղթի (կարտօնի) կերտուածքներ։
» 88 Երաժշտական գործիքների պատրաստութիւնը։
» 89 Կաւ-կարասիքի (մեբել) պատրաստութիւնը։
» 90 Եղջիւրից, փայտից, մետաղաթելից և ուրիշ նիւթերից պատրաստած արկղագործական, տակառագործական, պատենագործական և այլ պիտոյքների կերտուածքներ։

Խումբ 91 Անուշեղէնական կերտուածքներ։

Ծանօթ. Գեղջկարհեստաւորներին և արհեստաւորներին թոյլ է տրւում իրանց գործիքներով գալ՝ հանդէս արդիւնագործութիւնը ցոյցերով ներկայացնելու նպատակով:

## բ. ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Խումբ 92 Զանազան հացաբոյսերի զանազան տեսակի ալիւր. թեփ, կորկոտ, կալահան հատիկներ, պլենօ և այլն—իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան մի փութ։ Գդմաջ (մակարօն), խմորթել (վերմիշել)։

Խումբ 93 Օսլայ և գետնախնձորի մաթ։

Խումբ 94 Բուսախուղեր. քնջութի, կտաւատի, կանեփի, գետնադերչակի, տորեկի, ընկոյզի, մեկոնի և այլն. հում և մաքրած տեսակից իւրաքանչիւրից ոչ պակաս քան 5 փունտ։

Խումբ 95 Ըմպելիքներ, խմելիքներ։

ա. հացօղի, ալքօհօլ, նաստօյկա, լիկեօր, նալիվկա։

բ. գարեջուր, պօրտեր, մեղր, կվաս և այլն։

գ. հանքաջրեր, փշշացող և թարմացնող խմելիքներ։

Խումբ 96 Ծխախոտ—փշրած և հարած, ծխելու և հոտառութեան. սիգարներ և գլանակներ։

Խումբ 97 Մոմեր. ճրագուի, մոմի և ստեարինի։

» 98 Սապօն և անուշահոտ կերուածքներ։

» 99 Կաշի և կաշեայ կերուածքներ։

» 100 Քիմիական արդիւնքներ. ներկեր, լաք, լուցկի և այլն։

» 101 Ապակեղէններ։

» 102 Բամբակից, մետաքսից և ուրիշ թելանիւթերից ճօթեր։

» 103 Շինութեան նիւթեր. աղիւս, կղմինտր, խողովակներ, կաֆելկէր, մածանիւթ (ցեմենտ) և այլն։

Խումբ 104 Արհեստի և գեղջկարհեստի արդիւնքների պատրաստութեան գործիքներ և կաղապարակերտներ. նաշխագրոմական, ոստայնանկական, կահագործական, ոսկերչական և այլ տեսակ կերուածների գործարանական նկարներ։ Տեղային արհեստների, գեղջկարհեստների և գործարանական արդիւնագործութեան վերաբերեալ հեղինակութիւններ։

## Բաժին X. Լեռնային (հանքային)։

Խումբ 105 Նաֆթ. հում նաֆթ և նորանից մշակւած արդիւնքներ՝ ասֆալտ, ղըռ, օզօկերիտ, նաֆթադիլ։

Խումբ 106 Հանքավառելիք. քարածուխ, անտրացիտ, լիգնիտ, տորֆ։

» 107 Մետալահանքեր։

ա. Երկաթահանքեր. թուջ, երկաթ, պողպատ, երկաթահանքերի հետ գտնւող հանքատեսակների նմուշները. թուջից թափւածներ և զանազան գործարանական երկաթեայ և պողպատեայ կերուածներ։

բ. Պղնձահանքեր, ցինկահանքեր և նոցա մշակութեան արդիւնքները. պղնձեայ թղթեր, նիզակներ, ցինկ։ Այդ հանքերին ուղեկից հանքատեսակներ։

գ. Արճիճի, արծաթի և կօբալտի հանքեր, նոցա ուղեկից տեսակներ. հանքերի մշակութեան արդիւնքները։ Ֆլիւսների, հրատապ կաւի և քարերի նմուշներ։

Խումբ 108 Աւազացան և երակածիգ ոսկու նմուշներ։
» 109 Մարգանեցի և մկնդեղի հանքեր ու մշակութեան արդիւնքներ։
» 110 Ծծումբի և նորան ուղեկից հանքատեսակների նմուշները, ծծմբաթթու։

Խումբ 111 Աղ, քարաղ և ինքնանիստ աղ։ Դաւն աղ։ Գլաուբերեան աղ։ Բուրա։

Խումբ 112 Քարեր, պաղլեղաքար և պաղլեղ (շիբ)։ Վիմատիպաքար, պուդինգի մարմարիոն և օբսիդիան։ Զանազան հանքատեսակներից կերտուածներ։

Խումբ 113 Երկրաբանական քարտէզներ և ճեղքանկարներ—հանքային վառելիքի, հանքերի, աղերի, քարերի և այլ նիւթերի ծննդատեղերի բացատրութիւնով։ Զանազան հանքերի և նոցա մշակութեան վերաբերեալ կաղապարակերտեր, նկարներ և լուսանկարներ։

## Բաժին XI. Մանկավարժական-Արհեստագիտական։

Խումբ 114 Աշակերտների արհեստագիտական կերտուածներ. փականագործական, դարբնային, կահահիւսնային, հիւսնային և այլն։
Խումբ 115 Օրինրդական դպրոցների աշակերտուհիների ձեռագործներ։
» 116 Դպրոցների գիւղատնտեսական գործունէութեան արդիւնքներ։

Խումբ 117 Նկարչական և տեխնիկական նկարներ և դպրոցների աշակերտների և աշակերտուհիների գծագրութիւններ։

---

Ներկայ թուականի փետրուարի 19-ին վախճանւեց Ս. Էջմիածնում Ստեփաննոս Պալասանեան, յայտնի ուսուցիչը հայոց լեզուի, հայոց գրականութեան, հայոց պատմութեան և ֆրանսերէնի, «Փորձ» ամսագրի նախկին աշխատակից կրիտիկոսը «Գրիչ» ստորագրութեամբ։

---

Սոյն մարտի 10-ին Թիֆլիսում կնքեց իւր երկրաւորը Պետրոս Շանշեան, 71 տարեկան հասակում։ Հանգուցեալը իւր ժամանակի ամենախոշոր անձնաւորութիւնն էր՝ սկսած վերում թւականների սկզբից մինչև 60 թւականների վերջերքը։ Շանշեանը կատարելատիպն էր կրօնականբարոյական մարդու, հաստատուն կազմին ամենաամուր արմատով իւր ժամանակի բոլոր հալածանքների և փոթորիկների մէջ։ Հոգևոր իշխանութեան տնօրինութեամբ նա թաղւեց Վանքի մայր եկեղեցու գաւթում ներկայութեամբ հայ հասարակութեան այն մասի, որ մօքով և բարձր զգացումներով ապրել գիտէ։ «Մուրճ»-ը կը դրադւի այդ մարդով։